Մրցույթի հայտարարություն

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարսեր գյուղի Ռ. Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N319-Ն որոշմամբ հաստատված՝ Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության /նշանակման/ կարգի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ կետերի համաձայն՝

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարսեր գյուղի Ռ. Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը

2) Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը /հավաստագիր/:

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է.

1. Դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով
2. ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը
3. Հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը
4. Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով
5. Ինքնակենսագրություն

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են «ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարսեր գյուղի Ռ. Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում 2022թ. փետրվարի 10-ից մինչև 2022թ. մարտի 2-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00 մինչև 15:00, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022թ մարտի 17-ին ժամը 14:00-ին, «ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարսեր գյուղի Ռ. Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցե՝ գ. Վարսեր, 7-րդ փողոց, 10-րդ շենք:

Տեղեկությունների համար դիմել՝

1. Ռուզաննա Գաբրիելյանին հեռ. 093 413520 gor-martirosyan-2012@mail.ru
2. Մերուժան Համբարձումյանին հեռ. 098 313399 hayk8800@mail.ru